7. Անանիայի Ճառերը, զոր ունեցած է Հանդ. Պետրոս Մովսէսեան ի Շումէն: Այժմ անյայտ:

8. Կուռնելիոսի Ալափիտէի Մեկնութիւն Երեմիայի, լատիներէնէ թարգմանուած Ժէ. դարուն Ղուկաս Խարբերդցիէ, զոր ունեցած է Հանդ. Պետրոս Մովսէսեան ի Շումէն: Այժմ անյայտ:

9. Յայսմաւուրք, զոր ունեցած է Հանդ. Պետրոս Մովսէսեան ի Շումէն:

10. Աւետարան, սեփականութիւն Հանդ. Թադէոս Կարապետեանի ի Շումէն, վերջերս փոխադրուած ի Կոստանցա (Ռումանիա):

11. Աւետարան, փոքրադիր, մագաղաթեայ, սեփականութիւն Պ. Մանուկ Մանուկեանի ի Ռուսճուզ (այժմ ի Պլովդիւ), որ չկարողանալով զայն գտնել, կը նկատէ կորսուած:

16. Ձեռագիրք, սեփականութիւն Վառնայի Հանդուցեալ Տ. Սարգիս Ա. Քհյ. Ղաբիպեանի: Կը կարծուի թէ Ամերիկա տարուած են:

13. Ձեռագիրք Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Տրնովոյի. այժմ անհետացած:

14. Ատենախօսութիւն եւ Մեկնութիւն Պատարագի Ներսիսի Լամբրոնացւոյ, զոր ունեցած է Հանդուցեալ Տ. Կարապետ վրդ. Այլեքսեանեան ի Սիլիստրէ: Այժմ անյայտ:

15. Աւետարան, մագաղաթեայ, ընտիր գրչութեամբ եւ զեղեցիկ զարդանկարներով, զոր Բուլղարիոյ Ա. Իշխան Այլեքսանդր Բաթենբերգի նուիրած է Ռուսճուզի Հանդ. Տ. Կարապետ Ա. Քհյ. Պօյաճեանց 1881ին:

16. Քարոզգիրք Ունիթորաց, անճոռնի հայերէնով գրուած ձեռագիր մը, զոր 1897ի վերջերը Ռուսճուքէն Պ. Ստ. Տէրտէրեան՝ իր հօր՝ Կար. Ա. Քհյ. Պօյաճեանցի հրամանաւ գրկած է Վիեննայի Մխիթարեանց:

17. Յայսմաւուրք մը Գր. Խլաթեցւոյ, բոլորգիր, ամբողջ:

18. Յայսմաւուրք, պակասաւոր:

19. Քարոզգիրք Աբրահամ Աստապատեցւոյ:

20. Դատաստանագիրք Մխիթար Գօշի:

21—22. 2 թուղթ Աւետարան եւ 1՝ մագաղաթ:

23. Տօնացոյց մը:

24. Բժշկարան մը:

25. Մանրամունիք մը:

26. Համայիլ մը: Այս 10 կտոր ձեռագիրներն գրկուած են 1897ին Վիեննայի Մխիթարեանց՝ ձեռամբ Պ. Ստեփան Տէրտէրեանի Ռուսճուզէն:

27. «Գիրք որ կոչի աստեղաբաշխականք գիտութեան» Ժէ. դարու թարգմանութեամբ եւ գրչութեամբ ալ հաւանօրէն նոյն դարու վերջերէն. նոտրագիր: Նուիրուած՝ 1929ին Վիեննայի Մխիթարեանց՝ Պլովդիւէն Պ. Աղեքսանդր Տէմիրճիպաշեանի կողմէ:

28. Աւետարան, թղթեայ, բոլորգիր, գրուած Գրիգոր գրչի կողմէ՝ ՉՁԳ (= 1334) թուին ի Կիլիկիա (հաւանօրէն Զորոյ վանք): 1887ին անցած է Վենետիկի Մխիթարեանց (Հ. Բ. Սարգիսեան, «Մայր Մուցակ Հայ. Ձեռագր. Մխիթ. ի Վենետիկ», Ա. 1914, էջ 605):

29. Աւետարան. մագաղաթեայ բոլորգիր, ԺԶ—ԺԷ. դարէն: 1888ին անցած Վենետիկի Մխիթարեանց (Անդ, էջ 703):

Ծանօթութիւն. Ցանկէս դուրս կը մնան անշուշտ այն բազմազան ձեռագիրներն, շուրջ 200 կտորի չափ, որք յընթացս 1870, 1875—1878 եւ 1891 տարիներուն եւ մաս մ'ալ ի վերջ անցեալ դարու գրկուած են Վիեննայի եւ Վենետիկի Մխիթարեանց եւ էջմիածին՝ Ռուսճուզէն Տ. Կարապետ Ա. Քհյ. Պօյաճեանցի եւ Առաջն. տեղապահ Տ. Յովհաննէս Վրդ. Գրիգորեան-Արծրունիի ինչպէս նաեւ ասոր մահէն վերջ՝ եղբօրը Պ. Խաչիկ Գրիգորեանի կողմէ (հմմտ. Թէոդիկ, «Ամէնուն Տարեցոյցը», 1926, էջ 658: — Հ. Յ. Տաշեան, «Ցուցակ Հայ. Ձեռագր. Մխիթ. Վիեննա», էջ Զ): Ասոնցմէ 50 հատի չափ գրկուած են էջմիածին՝ 1875—1876 տարիներու ընթացքին՝ Ռուս եւ Թուրք պատերազմէն առաջ եւ որոնց մասին մանրամասն ծանօթութիւններ մեզ կը պակսին դժբախտաբար: Վենետիկ գրկուած ձեռագիրներուն 2ը միայն ցուցակագրուած են Հ. Բ. Սարգիսեանի կողմէ, զորս յիշեցինք քիչ վերը (Թիւ 28 եւ 29): Աւելի բախտաւոր եղած են Վիեննա գրկուածներն, որոնցմէ 46ը մտած են արդէն Հ. Յ. Տաշեանի «Ցուցակ»ին մէջ (տես անդ Թ. 4, 13, 14, 16 եւն):

Անցեալի բոլոր այս ձեռագրաց ամբողջութիւնը բաւական պերճախօս է՝ կը կարծենք, ցոյց տալու համար թէ Բուլղարահայ գաղութը որքան հարուստ է եղած երբեմն հայերէն ձեռագրաց տեսակէտով:

ՆԵՐՍԷՍ ԳԱՍԱՊԵԱՆ

ՑՈՒՑԱԿ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՑ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻՆ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ Ի ՎԻԵՆՆԱ

Ա. Զ Դ

Ցիսուն տարի յառաջ (1895) մեծանուն՝ հոյակապ բանասէր Հ. Յակոբոս Վ. Տաշեան կազմեց ու հրատարակեց. «Ցուցակ հայերէն Ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա»: Նկատողութեան առած էր մինչեւ այդ տարին սոյն Մատենադարանին մէջ գտնուած 573 հայերէն Ձեռագիրները: Կէս դարու շրջանի մէջ գրեթէ նոյնքան եւս Ձեռագիրներ Մխիթարեան Հայերու անխոնջ ջանքերով եկան հաւաքուեցան Մատենադարանին մէջ:

Այժմ անոնց ցուցակագրութեան հրատարակութեան ձեռնարկն է որ կ'ըլլայ: Հարկ է դիտել որ ցուցակագրութիւնը միեւնոյն ծրագրով մշակուած է — նուազ փոփոխութիւններով — եւ այն մեծ մասով Հ. Տաշեանի հսկողութեան տակ եւ անոր թելադրութիւններու համաձայն: Առաջին Ձեռագրին (Թ. 574) ցուցակագրութեան մէկ մասը անոր գրչէն է: — Նա սկսած է Ձեռագիրներու ցուցակագրութեան, սակայն աչքի ցաւի պատճառով շուտով դադրեցուցած:

574.

ՀԱՒԱՔԱԾՈՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ (ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ)

Հին Թիւ եւս՝ 574: — *ՌԾ* = 1601:

ԹՈՒՂԹՔ՝ 334 (330 եւ Ա—Դ): — ԹԵՐԹՔ՝ Ա—ԻԸ, իւրաքանչիւրը՝ 12 թուղթ: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 21,5 × 16: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն, 15 × 11: — ՏՈՂՔ՝ 23: — ՆԻՒԹ՝ թուղթ, հաստ ու կոկած, դեղնագոյն: — ԿԱԶՄ՝ փայտեայ կաշեպատ, դրոշմուած գծազարդերով, վնասուած, փականքի երկու բեւեռք միայն մնացած: — ՄԱԳԱՂԱԹԵԱՑ ՊԱՀՊԱՆԱԿ՝ 2 սկիզբն եւ 2 վերջը, մագաղաթ հաստ եւ ողորկ: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ Մատթէոսի Աւետարանէն գլ. Թ, Ժ եւ ԺԹ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ ընդհանրապէս լաւ, բայց խոնաւութեան բծերով՝ մանաւանդ վերջերը: — ԳԻՐ՝ բոլորգիր մեծ եւ մաքուր (թգ. 331—332՝ նօտր, ուրիշ գրչէ): — ԶԱՐԴԱԳԻՐՔ՝ գլխաւոր հատուածոց սկիզբը թռչնագիրք, պարզ՝ երկգոյն, միայն թգ. 5—233ա, այնուհետեւ կը պակսին: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ կարմրագիր. գլխ. հատուածոց առաջին երկու տողք՝ մանուշակ եւ կարմիր (թգ. 9ա՝ գլխագիր, մանուշակ ու կանանչ). թգ. 223է ետքը՝ պարզ կարմիր սկզբնատառք (թգ. 5—8 սկզբնատառք ցանկին՝ կարմիր եւ կանանչ): — ԽՈՐԱՆՔ՝ թգ. 9ա, պարզ, երկգոյն: — ԿԻՍԱԽՈՐԱՆՔ՝ թգ. 5ա անշուք (վերը՝ կտրուած): — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝ նոյնպէս պարզ երկգոյն (մեծ՝ թգ. 9ա), մինչեւ թգ. 233ա: — ՆԿԱՐՔ՝ չկան: — ԴԱՏԱՐԿ՝ թգ. 3—4: Լուսանցքները կտրուած՝ թգ. 57, մասամբ՝ թգ. 5, 193, 196: — ԺԱՄԱՆԱԿ՝ ՌԾ = 1601 (թգ. 331—333, նախնաբար դատարկ, գրուած են՝ ՌՁԵ = 1636էն ետքը): — ԳՐԻՉ՝ Գրիգոր երէց (թգ. 331—333՝ Ցակոբ երէց): — ԾԱՂԿՈՂ ԵՒ ԿԱԶՄՈՂ՝ անյայտ: — ՏԵՂԻ՝ թուի կ. Պոլիս (ստացիչը՝ Գրիգոր Բ. պատրիարք էր 1601ին): — ՏԷՐ՝ «Տէր Գրիգոր քաջ վրդ.» առաջնորդ Ամթայ եւ կեսարիոյ, եւ Պատրիարք կ. Պոլսոյ (1601—1610 եւ յետոյ՝ դարձեալ երկիցս)՝ Գրիգոր Բ.: — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝ գլխ. գրչին՝ թգ. 330ա—բ. տեղեկագրութիւն (վասն Ամասիոյ)՝ թգ. 206ա. կենսագրութիւն Գրիգորի Բ.՝ Ցակոբ երիցուէ՝ թգ. 331ա—332բ. նորագոյնք՝ այլեւայլ գրիչներէ՝ թգ. (2բ, 3ա), 4բ—(5ա, 118բ, 238բ, 250բ), 332բ, 334ա—բ (փակագծեալք՝ անշուշտ գրչափոխներ եւն): — ԿՆԻՔ՝ թգ. 1ա, 4բ, 5ա, 332բ: — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ՝ թգ. 4բ՝ «Գնեցաւ Պատմութիւն Կիրակոսի երկերիւր եւ յիսուն դահեկանաւ. յամի 1900 ի 15 Մարտի»:

Մատեանս է Հաւաքածոյ պատմութեան կամ ըստ գրչին Պատմագիրք: Ունի՝

Ա. Թղ. 5ա—36ա. Ձանազանք:

1. *Թղ. 5ա—8բ. «Այս ինչ է ի գիրս պատմութեան ցանիւ գրոշմած, նախ հաւատալն ի Քրիստոս եւ մկրտիլն Կոստանդիանոսի: Երկրորդ վասն սուրբ Խաչին որ Հացունեաց կոչի». միայն թէ Հիէն — մինչեւ ՃԲ կը պակսի: Թերթն ենկած է:*

2. *Թղ. 9ա. «Տեառն Կոստանդիանոսի թագաւորին: Թագաւորն Հռոմայ Կոստանդիանոս կռապաշտ էր, եւ հրապուրեալ ի Մաքսիմինակ կնոջէն իւրմէ, որ էր թոռն Դիոկղիտիանոսի արքային՝ հալածէր զքրիստոնեայսն եւ բաղում հաւատացեալս եսպան...»:*

Կը շարունակուի «Եւ եղեւ բորոտութիւն թագաւորին Կոստանդիանոսի, իբրեւ տասնամեայ. եւ բժիշկ(ք) ամենեւին ոչ կարացին բժշկել: Ասացին աղանդաւորք թէ անհնար է քեզ բժշկել, բայց միայն եթէ անարատ մանկունս ժողովեսցես եւ արեամբ նոցա լցցեն զաւազանս... եւ լուսացիս արեամբն եւ ապա ողջասցիս: Հրամայեաց եւ փութապէս ժողովեցին տղամանկունս բազում... ընթացան եւ կանգէք մարք տղայոցն... անկան առաջի թագաւորին կսկծալից ողբով: Եւ նորա տեսեալ զկոծս... արձակեաց զնոսա ուրախալից: ... Եւ ի գիշերին յայնմիկ երեւեցան թագաւորին Պետրոս եւ Պօղոս առաքեալքն Քրիստոսի եւ ասացին... առաքեա յայս նիշ լեառն եւ բեր առ քեզ զեպիսկոպոսապետն Սեղբեստրոս եւ նա պատրաստեսցէ քեզ աւազան ջրով, լուսացիս այնիւ եւ բժշկեսցիս... եւ ընդ առաւօտն առաքեաց ի լեառնն եւ տանէին զնա (զՍեղբեստրոս)... եւ առ ժամայն լցին զաւազանն ջրով եւ երթեալ ի տեղին ուրհնեաց Սեղբեստրոս զջուրն եւ մերկացուցեալ զթագաւորն իջուց ի ջուրն... եւ էլ մաքուր մարմնով». վերջը՝ թգ. 11բ. «Եւ եղեւ գլուխ (Սեղբ.) յԺը եպիսկոպոսաց որ ժողովեցան ի Նիկիա. առաջին սիւնհոդոսին եւ ի բարի ծերութեան հասեալ հանգեաւ խաղաղութեամբ ի Քրիստոս. յունվարի բ»:

© National Library of Armenia

3. Թղ. 11ա. «Պատմութիւն յաղագս սրբոյ Խաչին. Որ հացունեան կոչի: Եւ որպէս դարձաւ ի Պարսից աշխարհէն խաչն աստուածընկալ: Եւ յայնժամ մասն ընկալեալ տիկնոջն Սիւնեաց»:

4. ա. Թղ. 27ա. «Վասն կանոնական հրամանաց կաթողիկոսի Հաց Կոստանդ(ինի): Իսկ առաքինի կաթողիկոսն Հաց Կոստանդին իբրեւ ետես զաւեր աշխարհիս Հաց զտառապանս զոր կրէին ի հարկահանացն ...փութացաւ գրել թուխտս շրջաբերականս եւ կանոնս համաշխարհականս: Առաքեաց ընդ թղթոյն եւ զիմաստուն եւ զհանճարեղ վարդապետն զՎարդան»:

բ. Թղ. 27բ. Թուխտ Տեառն Կոստանդիեա շրջայբերական՝ Աղզմամբ խնամոց ամենակալ Հոգւոյն սրբոյ այս գիր ձեռին իմոյ է Կոստանդեայ ծառայի Քրիստոսի եւ շնորհաւք նորին Կաթողիկոս ամենայն Հայոց. զոր գրեցի յուսով իմով հոգւով առ Հայաստանեայսդ»: Վերջը՝ Թղ. 30բ. «Ողջ լերուք եւ անյարմար գրոյս անմեղադիր: Զի փափաքեցի իմով ձեռամբ գրել առ ձեզ»:

գ. Թղ. 30բ: «Սահմանք կանոնականք Տեառն Կոստանդեա. Հայոց Կաթողիկոսին է. Կոստանդին ծառայ Քրիստոսի եւ շնորհաւքն նորին Կաթողիկոս ամենայն Հայոց եւ աւրհնութեամբ եւ ողջունիւ եւ սիրովն Աստուծոյ. ծանուցանեմ լսման եկեղեցւոյդ Հայաստանեաց...»:

Կանոնական սահմաններէն վերջ կը գտնուի Կոստանդինի թղթին հետեւանքով Հայաստանի մէջ ծագած խնդիրները: Այս երեք կտորներն ալ կիրակոս Գանձակեցիի Հայոց Պատմութենէն առնուած են. հմմտ. գլ. Լթ—Խբ (տպ. Վենետ. 1865, էջ 162—175):

Բ. 1. Թղ. 36բ. «Համառաւտ պատմութիւն ժամանակաց ի սրբոյ Գրիգորէ մինչեւ ցյետին աւուրն թեւացեալ արարեալ Կիւրակոսի ընտրեալ վարդապետի մեծահռչակ ուխտին Գետկայ»: («Թեւացեալ»էն վերջ եղած խօսքերը տպ. չունի): Կիրք՝ որ ի բնութեան մարդկան. յոյս հաստատեալ է խնամաւք յարարչէն. քննասէր լինել իրաց ինչ անցելոց եւ կամ հանդերձեալն լինելոց»:

Մնացածը տպագրին (Վենետիկ 1865 եւ Տաչեանի Մայր ցուցակին [=ՏՄՑ] համեմատ. հմմտ. Թ. 124, էջ 498) կը չարունակուի: Սակայն նշանակութեան արժանին այն է որ օրինակողն առջեւը հին բնագիր մը ունի եւ որ անընթեռնելի ըլլալուն պատճառաւ երբեմն բաց տեղ կը ձգէ, որպէս զի անշուշտ վերջէն ուրիշ օրինակէ մը պակաւք լրացնէ. այսպէս են Թղ. 37ա, բ, 38ա, բ, 39ա, բ, 40բ, 41ա, 45բ, 47ա, 52բ, 53ա, բ, 55բ, 56ա, բ, 62ա եւ յառաջ եւ այն մերթ նախադասութիւններ, մերթ քանի մը բառ կամ մէկ բառ:

Թղ. 39ա: Փոխանակ տպագրին (էջ 5)՝ «Իսկ մերս յայսմ ամենայնէ թափուր եղեալ, զի թագաւորութիւն վաղ ուրեմն բարձեալ... եւ իշխանք ոչ ուրեք երեւեալ հայկազնի, բայց եթէ ուրեք զոհեալք յօտար աշխարհի: Բայց միայն մերոյս եղեալ առաջի» կայ՝ «զի թագաւորին վաղ ուրեմն բարձեա(լ)... բայց թէ ուրեք ուրեք զաւդեալք եւ թագուցեալք յաշխարհի. բայց միայն միւս եղեալ առաջի»:

Թղ. 39բ: «Ոչ ըստ նմանութեան արիսողոմեան քարին, այլ կենդանի — զի յիշեսցի ամենայն անուն (պակաս) Կիւրակոսի»:

Թղ. 39բ: «Համառօտ պատմութիւն եւ ցոյցք անուանց սրբոյն Գրիգորի: Եւ որք յետ նորա յաջորդեցին զաթոռ նորա: Ամենայն զովեստից արժանի. եւ յիշատակեաւ բարեաւ հռչակեալ հայրն մեր հոգեւոր եւ ըստ աւետարանին ծնուցեալ սուրբն Գրիգորիոս, յետ լուսաւորելոյ նորա զՀայաստան աշխարհս աստուածգիտութեամբ»:

Թղ. 83ա: Կարմրագրով կը գրուի Ներսէս Շնորհալւոյ՝ «Գիր հաւատոյ խոստովանութեան Հայաստանեայց եկեղեցւոյ գրեալ ի Ներսէսէ եպիսկոպոսէ, եղբօրէ կաթողիկոսին Հայոց Գրիգորիսի, ի խնդրոյ զերապատիւ փեսայի ինքնակալ թագաւորին Հռոմոց մեծի պրտաւատատարին Ալէքսիանոսի, յորժամ եկ յարեւելս եւ էր ի Մամուեստիա մարաքաղաք Կիլիկեցւոց, անտանաւոր հետեւելով եւ ի նմին կոչմամբ նորին ի թուականին ՈԺԴ: Բանիւք գուշնաքա իմն խաւսելով ի լսել խոհեմազունիզ եւ ատաուածասիրի անձին յաղագս մերս հաւատս եւ կարգաց եկեղեցւոյ հարցման»: Կը վերջանայ Թղ. 96բ՝ «Իսկ այն որ զոր միանգամ լսէ հաւատա եւ դատի որպէս ասաց քննողն սրտից ընդ ճշմարիտ հաւատացելոց ընկալցուք ի վարձս բարեաց ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որում փառք եւ զաւրութիւն յաւիտեանս. ամէն»:

Այս Պատմութիւնը վերտին կը չարունակուի: Թղ. 96բ. Խօսելով Կլայեցւոյն գործքերուն վրայ զանց կ'առնու տպագրին «եւ հանելուկս» խօսքը, մինչ կը գրէ՝ «Աբար եւ առակս խորհրդաբար ի գրոց, զի փոխանակ առասպելաց զայն ասացեն ի գեներուս եւ ի հարսանիս»:

2. Թղ. 99բ: «Վասն թագաւորութեան Լեւոնի որ ի կողմանս արեւմտից»: Որ ինչ մինչեւ ցայս վար էր պատմութիւնս երկուք աշխատութեան հաւաքեալ ի նախագրելոց» (տպ. Վենետ. 1865, էջ 74):

3. Թղ. 102բ: «Վասն իշխանացն որ յարեւելս Հայաստանեայց. Զաքարէի եւ Իւանայ եղբաւր նորա: Յաւուր ժամանակաց թագաւորութեան Լեւոնի Հաց արքայի» (տպ. էջ 78):

4. Թղ. 104բ: «Վասն ժողովոյն զոր արար Զաքարիա վասն խնդրոյ ինչ իրաց» (տպ. էջ 81):

5. Թղ. 109ա: «Վասն կաթողիկոսին Աղուանից գալոյ առ մեծ իշխանն նեղեալ այլազգաց» (տպ. էջ 88):

6. Թղ. 111ա: «Վասն վարդապետացն երեւելեաց որք էին ի կողմանս Վասպուրականի» (տպ. էջ 88):

7. Թղ. 112ա: «Վասն մահուանն Զաքարիայի զաւրավարին» (տպ. էջ 92):

8. Թղ. 112բ: «Վասն Լեւոնի արքային եւ վաղջանի նորին» (տպ. էջ 93):

9. Թղ. 114բ: «Համառաւտ հիւսուածք պատմութեանց կողմանցն Աղուանից ընդ ներգոյս զաւրուցատարարաբ» (տպ. էջ 97):

10. Թղ. 119ա: «Վասն ելանելոյն թաթար զաւրացն եւ փախստական առնելոյ զթագաւորն Վրաց» (տպ. էջ 102):

11. Թղ. 120ա: «Վասն որ ի սահմանս Գանձակա անկում եղեւ զաւրացն» (տպ. էջ 104):

12. Թղ. 121ա: «Վասն վարդապետին Մխիթարա. թէ ուստի էր եւ կամ որպիսի» (տպ. էջ 106):

13. Թղ. 123ա: «Վասն շինութեան վանացն նորին Գիտկա» (տպ. էջ 108):

14. Թղ. 125բ: «Թէ ոք էին որք երեւէին յաշակերտս նորա» (տպ. էջ 112):

15. Թղ. 126բ: «Վասն վաղջանի մեծի վարդապետին Մխիթարա, որ Գոշն կոչի» (տպ. էջ 115):

17. Թղ. 128բ: «Վասն սուլտանին Զալալադնին եւ կոտորելոյն զզաւրսն Վրաց. ի վեց հարիւր հդ թուականին» (տպ. էջ 117):

18. Թղ. 130ա: «Վասն կորբստեան Սուլտանին Զալալդնի եւ բառնալոյ նորա յերկրէ» (տպ. էջ 119):

19. Թղ. 131ա: «Թէ որպէս եւ թաթարն ապականել զաշխարհն ամենայն» (տպ. էջ 121):

20. Թղ. 133ա: «Վասն աւերման քաղաքին Գանձկա» (տպ. էջ 124):

21. Թղ. 134ա: «Վասն աւերածոյ աշխարհիս. Հաց եւ Վրաց ի նոյն զաւրաց» (տպ. էջ 125):

22. Թղ. 136ա: «Վասն առման քաղաքին Շամքորա» (տպ. էջ 128):

23. Թղ. 137ա: «Վասն գերութեան վարդապետին Վանականա եւ որոց ընդ նմա» (տպ. էջ 129):

24. Թղ. 141ա. «Վասն աւերման քաղաքին Լաւդէոյ» (տպ. էջ 135):

25. Թղ. 142ա: «Վասն անդանելո ի ձեռս նոցա իշխանին Աւագի» (տպ. էջ 136):

26. Թղ. 143ա: «Վասն քաղաքին Անո թէ որպէս մատնեաց Տէր ի ձեռս նորա» (տպ. էջ 138):

27. Թղ. 144բ: «Վասն աւերածին Կարուց» (տպ. էջ 140):

28. Թղ. 145բ: «Վասն յոդարկելոյ զիշխանն Աւազ առ խաղան (զանն) յարեւելս» (տպ. էջ 142):

29. Թղ. 147ա: «Վասն կոտորածին որ ի կողմանս Խաչենոյ. եւ վասն բարեպաշտ իշխանին Զալալին» (տպ. էջ 144):

30. Թղ. 148բ: «Վասն եկեղեցոյն զոր շինեաց» (տպ. էջ 146):

31. Թղ. 149բ: «Վասն ցուցման թաթարին եւ կերպարանաց. բացատրութիւնք սակաւք» (տպ. էջ 147):

32. Թղ. 151բ: «Վասն Ռաբանին Ասորոյ» (տպ. էջ 150):

33. Թղ. 152բ: «Վասն աւերման Թղուպալեա» (տպ. էջ 152):

34. Թղ. 153բ: «Վասն պատերազմին որ եղեւ ընդ Սուլտանն եւ ընդ թաթարն» (տպ. էջ 153):

35. Թղ. 155ա: «Վասն թագաւորին Հաց Հեթմոյ եւ զոր ինչ գործեցաւ» (տպ. էջ 156):

36. Թղ. 156ա: «Վասն Կոստանդեա իշխանին ի Լաւրրաւնին եւ զոր ինչ գործեաց նա ընդ աշխարհն Կիլիկեցւոց» (տպ. էջ 157):

37. Թղ. 157ա: «Վասն թագաւորութեան Դաւթի» (տպ. էջ 158):

38. Թղ. 157բ: «Վասն կոչելոյն ի մեծ դուռն զկաթողիկոսն Աղուանից զՏէր Ներսէս» (տպ. էջ 159):

39. Թղ. 158բ: «Վասն ասպատակելոյն նոցա ընդ կողմանս Վասպուրականի ի վերոյ բաղում գաւառաց» (տպ. էջ 161):

Գրիչը որովհետեւ նախապէս հմմտ. վերը՝ Կոստանդին կաթողիկոսի կանոնական հրամանները, շրջաբերական թուղթն ու կանոնական սահմանները արտագրած է, հոս անոնք զանց կ'առնու եւ կ'անցնի՝

40. Թղ. 159ա: «Վասն հարկահանաց որք եկին ի Ղանէն» (տպ. էջ 175):

41. Թղ. 160ա: «Վասն թագաւորացն Վրաց երթալոր առ Ղանն» (տպ. էջ 176):

42. Թղ. 161բ: «Վասն երթալոյն առ Ղանն Սմպատա զաւրավարին Հաց եւ որդւոյ Ղիաթադին Սուլտանին» (տպ. էջ 178):

43. Թղ. 162ա: «Վասն կոտորածին զոր արար զաւրն թաթ(արն) յաշխարհին Վրաց» (տպ. էջ 179):

44. Թղ. 163բ: «Վասն Դաւթի մոլորեցուցչի» (տպ. էջ 181):

45. Թղ. 166բ: «Վասն գիւին որ ի կերպարան կնոջ լեալ խառնակէր ընդ այր մի» (տպ. էջ 185):

46. Թղ. 167ա: «Վասն խնդրոյն որ եղեւ ի մէջ քրիստոնէից. վասն սուրբ Հոգւոյն Աստուծոյ թէ ի Հօրէ միայն պարտ է ասել թէ ի Հարէ եւ յՈրդւոյ» (տպ. էջ 186):

Ուր Վանականի եւ Յովսէփի կը կցուի՝ «Վարդան եւս, առ որս» կը գրեն Կիլիկեան ժողովականք թէ այս խնդրոյն մասին «զի՞նչ ասեն»:

47. Թղ. 169ա: «Խոստովանութիւն ճշմարիտ հաւատոյ ուղղափառաց» (տպ. էջ 189):

48. Թղ 171բ: (Խրատ դաւանութեան) «Վանական վարդապետին» (տպ. էջ 193):

49. Թղ. 174բ: «Վասն վաղջանի սուրբ վարդապետին Վանականայ» (տպ. էջ 198):

50. Թղ. 176: »Վասն Յովանիսի Գառնեցւոյ» (տպ. էջ 200):

51. Թղ. 180ա. «Վասն Սարթախին որդւոյ Բաթուին» (տպ. էջ 205):

52. Թղ. 182ա: «Վասն մարախին որ եկեր զաշխարհս» (տպ. էջ 208):

53. Թղ. 182բ: «Վասն աշխարհագրին որ եղեւ հրամանաւ Մանկու Ղանին» (տպ. էջ 209):

54. Թղ. 183բ: «Վասն երթալոր թագաւորին Հաց Հեթմոյ առ Բաթուն եւ Մանկու Ղանն» (տպ. էջ 211):

55. Թղ. 187ա: «Վասն կոտորածի երկրին Հռոմոյ» (տպ. էջ 217):

© National Library of Armenia

56. Թղ. 189ա: «Վասն աւերածոյն Բաղդատա» (տպ. էջ 220):

57. Թղ. 192ա: «Վասն աւերածի Մարտիրոսաց քաղաքին» (տպ. էջ 225):

58. Թղ. 193բ: «Վասն որ ինչ գործեցաւ ի կողմանս Միջագետաց եւ Ասորոց» (տպ. էջ 227):

59. Թղ. 194բ: «Վասն մահուան բարեպաշտ իշխանին Զալալին» (տպ. էջ 228):

60. Թղ. 196ա: «Վասն մահուան իշխանին Շահնշահ(ի) եւ որդւոյ նորա Զաքարէի» (տպ. էջ 230):

61. Թղ. 196բ: «Վասն մեծ պատերազմին որ եղեւ միմեանս Հուլանուին եւ Բերքային» (տպ. էջ 231):

Վերջը՝ Թղ. 199ա՝ «Եւ հարին զրանակս իւրեանց առ ափն Կուր գետոն եւ կալան սոքա աստի եւ նոքա անտի ամրացուցեալ զեզր գետոյն ցանկով եւ փոսիւք խորագունիւք»: Կիրակոս Գանձակեցւի Պատմութենէն ունինք Թ. 124 եւ 328 գրչագրիները (հմմտ. ՏՄՁ. էջ 408 եւ 773): Առաջիկայ Զեռագիրը հին ըլալուն գլխարկութիւնները մանրամասնօրէն յառաջ բերինք:

Գ. 1. Թղ. 199ա: «Զենոբա եպիսկոպոսին խաւսք վասն առաջաւորի պահոց բ. շաբաթի ի վերայ գիւտ նշխարաց սբ. Կարապետին: (Սկ.) Եւ յորժամ տեղեկացաւ թագաւորն Տրդատ վասն սրբոյն Գրիգորի եթէ Անակա որդի է, ապա հրամայեաց զնա ի Վիրապն արկանել եւ կացեալ նորա ի Վիրապն ամս ԺԵ: Եւ եհաս հրաման ի Տեառնէ ելանել նմա՝ անտի. քանզի երկիրն Հայոց ամենայն ընակչաւքն դիւադնեալ մոլէին»:

Ամբողջ հատածը համառօտութիւնն է Զենոբայ՝ «Պատասխանի թղթոյն Ասորւոց եւ Պատմութիւն վասն իննակնեան տեղացն եւ պատերազմին որ յԱրձանայ» (հմմտ. Զենոբի Պատմութիւնը, տպ. Վենետիկ 1889, էջ 21): Մերթ ընդլայնում է, մերթ համառօտութիւն նիւթին համաձայն: Հակիրճ բովանդակութիւնն է՝ Ս. Գր. Լուսաւորիչ Վիրապէն ազատելով Տրդատ կը մկրտէ՝ «Եւ ապա թագաւորն զաւր զումարեալ... եւ ելեալ ի Վաղարշապատ քաղաքէն անցանէին ընդ գաւառն Բասենոյ եւ գային յերէզնաւան յեկեղեցեաց գաւառ... եւ անտի երթեալ մտին ի կեսարիա եւ ձեռնադրեալ ի սրբոյն Ղեւոնդեայ զՍբ. Գրիգոր... տա նմա զնշխար սրբոյ Կարապետին եւ Աթանագինէ վկային... եւ յետ այսոքիկ ելեալք ի կեսարիա(յ)է մեայր ի Սեբաստիա աւուրս ինչ. հաւաքեալ զկնի իւր եւ դասս պաշտաւնէից եւ այլ եւս զկտակարանս սուրբս վասն կարգաց եկեղեցեաց. կոչեաց եւ զամենայն վարդապետս յԱղեկսանդրէ հրաշազարդեալս կարգաւք պաշտամանց եւ կցորդից, յորոց զլխաւորն Դէմառիոս, զոր ձեռնադրեաց Դվնա դաշտին եպիսկոպոս. եւ զայլս բազումս յԱսորւոց, որ եւ գլխ իսկ զՁենոբ եւ ոչ եթող դնալ ի Նիւսորբիա առ Եղկազար եղբայր իմ... եւ անտի ելեալ անցաք զգազում աւթեվանուք մինչ եւ ի Թորգան եւ անդ եպիսկոպոս ձեռնադրեաց զՍովտրինոս Եփեսացի. թողու տեսուչ եւ վարդապետ ամենայն երկրին Ծոփաց եւ մեք ելեալ անտի կամէաք անցանել ընդ Հարք եւ ընդ Կարին. իսկ ոմանք յիշխանացն զգացուցին սրբոյն Գրիգորի թէ եւ ի գաւառն Տարաւնա են բ. տունք բաղնաց... եւ լուաւ եթէ Վահէվահան մեհեանն մնացեալ ի յերկրին Տարաւնոյ, մեհեանն մեծադանձ լի ոսկով եւ արծաթով. եւ բազում նուէրք մեծաց թագաւորացն ձիւնեալ անդ. ուրեքորդ պաշտաւն հռչակեալ անուանեալ Վիշապաքաղն Վահագնի. յաչտես տեղիսն թագաւորացն Հայոց. ի սնարս Բարկեա, որ այժմ Բարուտ կոչի, ի վերայ գետոյն Եփրատա որ անուան(ի) Արծնի, որ հանդէպ նա ի մեծի լերինն Ստրոսի որ անուանեալ ըստ յանախաշատ պաշտաման տեղացն Աշտիշատ, զի ցայն եւս չէն կային զ. բաղինք ի նմա առաջի մեհեանն Վահէվահան, երկրորդն Ոսկէմայր ոսկէծին դիցն եւ բաղինն իսկ յայս անուն անուանեալ ոսկէհատ Ոսկէմայր դիցն: Երրորդ մեհեանն անուանեալ Ոստղեկեան դիցն սեւնակ Վահագնի կարդարացեալ ըստ յունականին, որ է ինքն Ափոդիտէս: Արդ դիմեաց զալ սուրբն Գրիգոր զի քանդեսցէ զայն եւ... բարձեալ բերէր ընդ իւր զնշխարս», սակայն բեռնակիր ձիերն յառաջ չեն երթար եւ հրեշտակ մը Գրիգորի կ'ըսէ որ «հանեցաւ Տէր ընդ սրբոցդ բնակիլ ի տեղւոջդ... չինեալ (Գրիգոր) վկայարանս եւ զսուրբսն ի հանդիստ փոխեցին: Եւ մինչ դեռ կազմէին զչինուած մատրանն... չոգաւ (Գրիգոր) եւ հարթեաց տապալեաց ընկեաց զամենայն չինուածն (բաղնին)... եւ եղան հիմունս եկեղեցւոյ... կանգնէր սեղան ի վկայարանի սրբոյն եւ մատուցանէր պատարագ փրկութեան եւ բաշխէր զմարմին եւ զարիւն կենարար եւ հրամայեաց կատարել ամ յամէ ի նմին տեղւոջ ժողովել ի յիշատակ սրբոյն որ օր է էր Սահմի. զի խնդութեամբ զաւր տաւնին խմբեսցեն...»:

2. Թղ. 202բ: «Թուխթ Պիղատոսի դատաւորին առ Տիբերիա կայսրն զոր գրեաց յետ խաչելութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ: Ինքնակալդ Սեբաստեա փառաւորի եւ հզաւրի Տիբերիա կայսեր ի Պիղատոսէ դատաւորէ արեւելից կողմանս Պաղեստինեա եւ Փիւնիկո խնդալ». վերջը՝ Թղ. 205բ. «Որպէս լուա յԱբգարու թագաւորէ Հայոց իբրեւ էառ զհրամանս զայս Լիկիանոս» (տե՛ս Հանդէս Ամսօրեայ, 1894, էջ 278 եւ Թանդարան Հին եւ Նոր գպրութեանց, Բ., Վենետ. 1898, էջ 360):

Թղ. 206ա: «Կը պատմուի թէ ի թուականս Հայոց ՌՃԷ, Հայոց ամսոյ Տրէի ԺԷ ի լուսանալ ԺԸին... եղեւ ահագին շարժումն... (Ամասիա)... Դարձեալ ի նոյն ամի Մայիս ամսոյ ԻԳ աւր... խաւարումն եղեւ...»:

3. Թղ. 206բ: «Գիրք ի վերայ բնութեան հանրական եւ մասնական քահանայի ումեմն Իշաղ անուն Յեսու: Խնդիր վասն բնութեան այսպիսի արասցուք. յորժամ գոյացոյց Աստուած զէսս ոչ էից տեղի բնակութեան. կազմեաց զաշխարհ» (հմմտ. ՏՄՁ, Թ. 109, 8):

4. Թղ. 215բ. Նորին ասացալ վասն համոյ: — Թղ. 216ա. Յաղագս զինոյ եւ արբեցութեան հարցանէ: Վերջ՝ Թղ. 218ա: «Ուր են կապուտակ ականոցքիք, ոչ ապաքէն այնոցիկ որք ի զինոջ. եւ որք զիենն զղինարբու(ս)քն»: Այս քան առ այս...»:

Դ. Թղ. 218ա: Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցւոյ: Առանց որ եւ իցէ վերնագրի մը յանկարծ Մատթէոս Ուռհայեցւոյ պատմութիւնը սկզբանէ կը սկսի: «Իսկ ընդ յաւուրսն ընդ այնոսիկ եւ ի յամին ՆԱ եղեւ սով սաստիկ ի բազում տեղիս, բայց աշխարհն հարաւոր ի յերկրին Տաճկաց եղեւ նեղութիւն մեծ»:

Սոյն պատմութիւնը կը հասնի մինչեւ Սենեքերիմ Արծրունիի զօրքերուն կրած պարտութիւնն եւ անոր մասին արքային խորհրդածութիւնն եւ Եսայի խօսքին քով թէ «Սմբակք երիվարաց նոցա հաստատուն» (Մատ. Ուռհայեցւոյ Պատմութիւն, Վաղարշապատ 1898, էջ 489 կանգ կ'առնու գրելով՝ «Այս տեղս պակասէ շատ բան եւ օր. չկայ» (թղ. 240ա): Այդ պակասը բաւական շատ է, տպագրին համեմատ էջ 48—54): Կը շարունակուի՝ «Մինչեւ հանապազ ի գիներբուս գեղերէդին վասն սերո եւ ցանկութեան չար եւ պիղծ ախտին. արծաթասէրք առաւել քան աստուածասէրք» հետեւաբար Յովհ. Կոզեռն վարդապետին խօսքին կէսէն: Ապա յառաջ կ'ընթանայ մինչեւ ՇՄԶ տարին եւ նոյն տարւոյն այլ եւ այլ դէպքերէն մին է հետեւեալը (Թղ. 330ա) զոր պատմելով կը վերջացնէ՝ «Յայսմ ամին ելանէ աստղ մի գիսաւոր յարեւմտուս կոյս էր եւ յարեգ ամսի եւ ագի նորա նուազ ցուցանէր զլոյսն իւր եւ կացեալ նորա զաւուրս ԺԵ եւ լինէր աներեւոյթ տեսանողացս, որում փառք յաւիտեանս. ամէն» (հմմտ. անդ, էջ 259):

ԳԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. 1. Գլխաւոր յիշատակարան թղ. 330ա. «Փառք անձին Աստուծոյ եւ ծնելոյն ի նմանէ Որդւոյն Միածնի, եւ սուրբ Հոգւոյն ելոյի ի նոցունց էութենէ: Երիցն ի միում աստուածութեան Հայր եւ Որդի եւ Հոգւոյն սրբոյն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն: Որ եւ ըստ առատ իւր գթութեան եւ ողորմութեան միշտ զկամս հաւատով հայցողացն լցուցանող է ըստ հոգւոյ եւ եթէ ըստ մարմնոյ, ըստ որում ի բազմաց բանասիրեացն եւ զմս յիղձս կատարեաց եւ եւ կարողութիւն տկար անձին իմոյ: Արդ գրեցաւ դէղեցկաբարբար չարագրութեանցս որ կոչի պատմագիրք, ի յոլովից հաւաքեալ է մի տուփս իբր զծաղկաւոր դրախտ շնորհեաց ինձ է մաքլչութիւն. աւրհնեալ է պարգեւատուն Աստուած: Գրեցաւ եւ աւարտեցաւ սուրբ տաս ի թվականութեանս Հայոց Ռ. եւ Ծ երորդի եւ Սեպտեմբեր ամսոյ ի յելն Հոկտեմբերի Ա. աւրն Երկուշաբթի (= 1601) ձեռամբն ողնամեղ եւ զաղիր հոգով մեղօք լցեալ Գրիգոր երէցոյն, որ անուամբս քահանայ եւ գործով ոչ: Արդ յիշեցէք զմեզ զարս գծծողս ի սուրբ եւ արժանաւոր աղաւթս ձեր եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյն իւրմէ (sic) ի սուրբ արքայութեան. ամէն»:

«Արդ յիշեցէք զքաջ բարունապետն Հայաստանեայց աշխարհին զՏէր Գրիգոր քաջ վարդապետն մեր, որ է սուրբ հոգւով եւ մաքուր մարմնով, եւ լի ամենայն շնորհօքն աստուածային բանիցն, հետեւող, որ է նոյն շնորհօքն աստուածային աշխարհիս Հայաստանեացս, որ եւ պարծանք ամենայն աշխարհիս Հայաստանեացս, որ եւ զրել փափաքանաւք եւ զպատմագիրքս յիշատակ բարի»:

«Այլ եւ յիշատակ փոխեցելոյն առ Քրիստոս Ռշն թուին հոգւեւոր հօրն իմոյ տիեզերալոյս բարունապետին ըստ հոգւոյ եւ ըստ մարմնոյ հօրեղբօրն իմոյ Տէր տիեզերալոյս խարանազգեաց ճգնաւորին Տէր Սրապիոն աստուածաբան բարունապետին Ուրհայեցւոյ ապիոն աստուածաբան բարունապետին զոր ասեալ գաւազան ի նմանէ ի Տիգրանաշէն մայրաքաղաքն ռեալ գաւազան ի նմանէ ի Տիգրանաշէն մայրաքաղաքն Ռեմ թուին: Սա գնաց ի Բիւզանդիայ վասն Ամիթ Ռեմ թուին: Սա գնաց ի Բիւզանդիայ վասն Ամիթ Ռեմ թուին: Եւ էր պարտ երուսաղէմայ պարտուցն, ի ժամանակս Տէր Ազարիայ կաթողիկոսին, զոր տեսեալ զիմաստութիւն եւ զխոշոր վարուք ճգնութիւն սորա եւ հաւանեալ միաբան ամենեցուն զրեցին առ կաթողիկոսն ի սուրբ էջմիածին ձեռնադրել իւրեանց առաջնորդ: Եւ եկեալ մինչեւ ի Թոզաթ՝ երթալ յաթոռն սուրբ եւ վասն յոլովութեան անտի դարձաւ ի Սիս առ հռչակեալ կաթողիկոսն տէր Ովհաննէս ի թուին (չէ նշանակուած) եւ ձեռնադրեալ ի նմանէ եպիսկոպոս եւ առաջնորդ Իսամպոլու եւ զնացեալ անդ արար բազում ուղղութիւնս եւ նստեալ ժամանակս ինչ: Եւ ի ՌԾԸ թուին ելեալ ի Բիւզանդիոյ նաւեալ յեգիպտոս, ելեալ ի լեռն Սինա. ընդ իւր ունելով զմովսէս վարդապետն տուեալ նմա զաւազան ի Բիւզանդիայ. որ եւ յետոյ եղեւ կաթողիկոս ի սուրբ էջմիածինն եւ կատարեալ զուխտս իւրեանց յաստուածախօս լեռնէն դարձան անտի Ամիթ: Եւ աբարեալ ժողով բազում եպիսկոպոսաց եւ վարդապետաց եւ զօրավարաւորաց եւ վաճառականաց եւ ռամկաց սակս պարտուցն Երուսաղէմայ: Նաեւ եկն Յոհաննն Ամիթայ, գրեցին առաջնորդսն եւ առ զօրավարաւորսն Վանայ զալ առ նոսա եւ ժողովեալ բազում առաջնորդաց եկեալ յերուսաղէմ Ռեմ թուին: Եւ էր պարտք սրբոյ Երուսաղէմայ կռ. զրչ., որ առաջնորդ էր արքար Դաւիթն եւ սատարութեամբ հզօրին Աստուծոյ վճարեալ պարտքն եւ ազատեալ զայդեստանն ամենայն եւ եղեալ զԳրիգոր Պարոն տէր առաջնորդ սրբոյ Երուսաղէմայ ի սոյն ամին. որոց վարձատրութիւնք ի Քրիստոսէ լիցի ի ժամ դատաստանին. ամէն: Դարձեալ ՌԿ թուին կրկին տարան ի Բիւզանդեայ արքունական հրամանաւ եւ նստեալ յոլով ժամանակս եւ ձանձրացեալ ի նոցանէ եւ հրաժարեալ եկն ի կեսարիայ: Դարձեալ կրկին անդամ ի տարան ի Կոստանդինուպոլիս բազում քահանայիւք եւ արքունական հրամանաւ, որ յար եւ նման էր առաջին գիտապետացն մեբոց խստակրօն վարուքն եւ աստուածարան վարդապետութեամբն՝ փայլեաց յաշխարհի որպէս զարեգակն ոչ փոխելով զնոյնը վարս եւ զնգնողական առաքինութիւնն, զոր ստացեալ էր ի կրաւնաւորութեան իւրում. ոչ կերեալ միս եւ ոչ ըմպեալ գինի. ի ժամ ձեռնադրութեանն, այլ միով ժամաւ չատացեալ զաւուրս իւր, բայց ի շաբաթու եւ կիւրակէի. մանաւանդ խորդոմն մազղրիանաւն կայր զամենայն կեանս իւր եւ էր վկայեալ յամենեցունց եւ յոյժ հմուտ աստուածաբանոց հին եւ նոր կտակարանաց նաեւ տեղեակք արտաքնոց հանճարաց եւս ուսուցուրապին եւ երկրաչափականին՝ լի եւ անթերի: Այլ եւ ջատագով ճշմարտութեան օրինաց եւ կարգաց սուրբ հարցն. զանձն իւր օրինակ տալով ամենեցուն: Այլ եւ զրարի նախանձն, զոր ունէր առ Աստուած եւ առ մարդիկք, որ անգադար խրատ(ս) օրինացն ուսուցանէր զամենեսեան: Նաեւ զտիւ եւ զգիշեր յաստուածաշունչ գրոց ընթեռնուլոյ ոչ պարապէր. մինչեւ ի ժամ ծերութեան յուսուցանելոյ եւ խրատելոյ ոչ դադարէր եւ զաչեոցիկն ոչ առնոյր յեւ, վասն աշխատասէր եւ ժրաջան կամացն եւ ընթեռնլոյն եւ զղիչերն առանձնական աղօթիւքն, զանձն յանկողինն ոչ տայր: Տքնութեամբ եւ սաղմոսերգութեամբ վճարեալ զառաւելայ կեանս իւր ի փառս ամենասուրբ Երրորդութեան եւ թաղեցաւ ի քաղաքն Ղալաթիայ՝ մերձ ի թագաւորանիստ քաղաքն Իսամպոլ ի դրան եկեղեցւոյ սրբոյն Գրիգորին մեր Լուսաւորչին, ՌՁ թվին եւ առնէ Աստուած ի տապանէ սրբոյս բազում սքանչելիս ի հիւանդս եւ յախտաժէտս եւ ի լուսնոտս եւ յամենայն ախտացեալս ի փառս ակրութեան իւրոյ եւ ի պատիւ սրբոց իւրոյ: ամէն: Այլ եւ ժողովեաց եւ շարադրեաց Բ. գիրք՝ զմէկն Թվականք եւ Պատմութիւնք յԱդամայ մինչեւ ի մեր ՌՁ թուին աշխատեալ մինչ ի վախճանն իւր. եւ

© National Library of Armenia

երկրորդ թարգմանեաց գիրք մի արապի ի մեր բարբառս. այլ եւ զուղղ մի ի մեր գիր եւ լեզու յերկնից հանդոյն աստեղաղարդ չարիւ զարդարեալ: Այլ եւ առաց մխիթարական բանս վասն մահւան վարդապետին իւրոյ Տէր Սրապիոն քաջ հուսորին համեղ եւ զանազան բանիւք: Նաւս ասաց Բ զանձ եւ Բ տաղ զարդարեալ ի վերայ այրուրենից համեղ եւ խրթին բառիւք, չարաղասեալ ողբերգական բանիւք եւ առաքեալ ի Համիթ եւ հեռեւակ այս է ցրիւ բանիւք եւ ներչափանական տաղիւ ոգեալ, զնմարաս գիծն հանդերձ վերջաբրիւ փաղառութեանց ըստ արփափեառաց առուց արդասաւորեալ: Այլ եւ ներբողեալ աղօթք հոգեխառն մաղթոդականք ի սուրբ պատարագին ի գէմս ամենասուրբ Երրորդութեան եւ մի աստուածութեանն: Այլ եւ չինեաց կամուրջ մի բազում ծախիւք ի սահմանս Գերմանիկոյ եւ կեսարիոյ մերձ ի Տօմարդայ, ՌՀ. թուին սկսեալ եւ ՌԶԱ թվին աւարտեալ. որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի. ամէն: Այլ ես անարժան Յակոբ էրէցս եղբօրորդի տիեզերալոյս վարդապետին Գրիգորի. տգէտ եւ անիմաստս զորպիսի՛ զուվութիւնս դրուատեցից բարուոյս մեծի, որ գեր ի վերոյ է քան զմիտք մարդկան. մի զայթաղեսցիս յասելս, ով սիրելի, եթէ կամիս եւ ոչ ձանձրանաս, դիտ եւ ընթերցիր զողբերգական եւ զմխիթարական գիր եւ զասացեալ զանձերս եւ զներչափոդական տաղերս խրթնածածուկ բառերովն եւ զմեղաւորս յիշեա ի Տէր աղաչեմ: Այլ եւ յիշատակ լիցի նախնեաց իմոց մեծ պապուն իմո Եաղուպին եւ մամուն իմո Վարդիսթուենն, հօր իմոյ Բազտասարին եւ մօրն իմոյ Մթիալին, հօրեղբօրն իմոյ Խաբրպալին եւ հօրաքեռն իմոյ Թուխտարին եւ հարազատ եղբարց իմոց ի մանկութեան եւ յերիտասարդութեան առ Քրիստոս փոխեցելոց՝ Եաղուպին, Կարապետին, Ոհաննիսին, Յովսէփին եւ Ոհաննին. նաեւ զեղեցկատիպ եւ քաղցրաձայն զգիր Աբրահամին՝ ինքզրոցի բանիս եւ ամենայն արեանառու մերձաւորաց եւ կենդանեաց եւ առ Քրիստոս փոխեցելոց. ամէն: Կրկին եւ երեքին աղաչեմ յիշել ի Տէր զՅակոբ էրէցս եւ զկենակիցն իմ զկոչեցեալն Խաթուն եւ զմայր մօր իմոյ Մարթայն եւ զբեռին իմ զՊալին եւ որդեգրութեամբ սնուցեալ որդին իմ վարժեալ բազում աշխատութեամբ զՏէր Սիմէօն քահանայն որ առ Աստուած փոխեցաւ եւ աղաչեմ յիշել նաեւ ի Տէր զՏէր Անտոն եւ զհօրեղբօրորդին իմ զմահդեսի Յարութիւնն եւ զմահդեսի Դարլան եւ զՕայսար չելէպին վարժեալ (անընթռնելի), որ ի ժամ ձեռնադրութեանն բազում երկօր աշխատութիւն կրէին վասն մեր. հաստուցէ նոցա Տէր վարձս չատ վաստակոց իւրեանց. ամէն:

Եւս առաւել ամենայն հաւատացեալ քրիստոնէից ողորմեսցի Տէր Աստուած յաւուրն յահեղին եւ լեռ մեղապարտ զծոցիս. ամէն: Իսկ որ չարժողն է ամենայնի եւ չարժէ զամենայն էակս ի բարի եւ ինքն անշարժ է ամենայնիւ Հոգին սուրբ Աստուած ճշմարիտ, որ չարժեաց զչարժումն ի բարին եւ բորբոքեաց ի սիրտ եւ հոգի, չարժեացէ զձեզ ով ընթերցող հարք եւ եղբարք իմ, աղաչեմ զձեզ սիրովն Քրիստոսի, որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով յիշեցէք առ Տէր սրտի մտօք եւ միով հայր մեղայիւ ներումն խնդրեցէք վերագրելոցս եւ Աստուած ողորմի առացէք եւ Աստուած, որ առատն է ի տուրս բարեաց ձեզ յիշողացդ եւ մեզ յիշելոցս առ հասարակ ողորմեսցի՝ Քրիստոս յաւուրն ահեղին եւ ի ժամ դատաստանին, եղիցի, ամէն, եղիցի:

2. Թղ. 4բ: «Թվ. ՌՃԿԶ Ապրիլի ամսոյ Զ. աւրն Ուրբաթի ի լուսանալ առաւօտին կեսարիա քաղաքն չարժ եղեւ եւ մինչ ԶԴ բաժինին Ա. ըն փլաւ, ԲԳ ռ մարդ Տաճկեն ճ ի չափ մարդ քրիստոնէից փլածին ներքեւ մնաց. վասն ծովացեալ մեղաց մերոց, որպէս ասէ մարգարէն՝ զերեզմանք տունք նոցա: Տէր Աստուած այլ պէթերէ փրկէ ամենայն աշխարհ: Թվին ՌՄԽԲ: Հոկտեմբերի Բ աւուրն ի կեսարիոյ քաղաքին Թաղն որ կոչի Միսլիմ Բաշայ մահելլեսի ըստորին քաղաքին պողպլլաաբլար պիր լնէկ պուղպը ջըլաբը զանընտան...»:

3. Թղ. 332բ՝ Թվ. ՌՃԾԸ անանոց մահ եղաւ մինչեւ ի սպաս կատարեցան. զարձեալ Թվ. ՌՃԿ. կեսարացիքն Սեֆեր արին. հայուն վրա Աստուած վերջին բարին կատարէ. ամէն: Նոյն ամի Մայիս ամսոյ ԺԲ. Թ ժամ սաստիկ օրտուում եղեւ ջուրց թափ կարկուտ սաստիկ եղեւ: — Թղ. 332բ՝ (Ծածկագիր՝ «Գծոզ յիշատակնիս Բասիլ եղեկելի կրաւնաւորս. մաղթեմ առ Քրիստոս յիշել ի թվին ՌՃԶ»: — Թղ. 333ա՝ «Թվին ՌՃԸ պատրիարգ եղեւ Տէր Մարտիրոս վարդապետն եւ եհան նուիրակ Աստուածատուր վարդապետն եւ Յոհան եպիսկոպոս յերկիրն Գաղատիոյ եւ կեսարիս մինչեւ ի Կաֆան եւ Ուռումելի եւ էին այնմիկ (?) քահանայքն Տէր Յակոբ որ է ուսումնասէր եւ աղքատասէր եւ է կատարեալ վարդապետ եպիսկոպոս եւ որոց հայր, որ բազում վարձս ունի եւ ոչ ոք գիտէ ի մարդկանէն Աստուած ընդունելի արասցէ եւ է բնութեամբ հեզ եւ խոնարհ, աստուածասէր եւ մարդասէր, իբրեւ Աբրահամու նման որ ասէ Պօղոս թէ հարազատ որդի զնմանութիւն հօրն տարերէ եւ Աստուած օրհնէ զինքեանքն զմեծն եւ զփոքրն եւ զեկեղեցին, հաստատ պահէ մինչեւ ի գալուստն Քրիստոսի խաչին լուսուն. Գարրիէլեան փողոցն արժանի արասցէ. ամէն»: — Թղ. 334ա. «Տէր Մարգարս յիշեցէք. ի թվին ՌՄԽԲ»: — Թղ. 334բ. Թրբերէն՝ անչան ապա՝

«Մէզ օղնութիւն հանիր ով սուրբդ Սարգիս, ցոյց մեզ ճանապարհ ուր մեք երթամք. խնդրեմք բարերարեն. մէզի ուժ տացէ, հաս տեսցուք թշնամոյն ամօթ արասցէ, ազգն քրիստոնէից պայծառասցուսցէ լուսաւորողի...» մնացածը՝ անընթեռնելի:

575.

ՂՈՒՐԱՆ

Հին Թիւ՝ նոյն — ԺԸ.—ԺԹ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 71: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 22 × 16·5: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն 16 × 11: — ՏՈՂՔ՝ 21: — ԹԵՐԹՔ՝ 9: — ՆԻԻԹ՝ թուղթ բաւական հաստ, անողորկ, կապտագոյն: — ԿԱԶՄ՝ առջեւի կողը կը պակսի, ետեւինը կայ, բայց շատ վնասուած: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ վնասուած, թղ. 2, 3, 4, 5 մէջտեղէն կտրուած երկու անգամ. եւ մինչեւ 9 թղ. կազմէն բաժնուած: — ԳԻՐ՝ ճօտրգիր մաքուր: — ԶԱՐԴԱԳԻՐՔ՝ թղ. 3: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ չունի: — ԽՈՐԱՆՔ՝ չունի: — ԿԻՍԱԽՈՐԱՆՔ՝ պակասաւոր զարդ թղ. 3ա: — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝ չունի: — ՆԿԱՐՔ՝ չունի: — ԴԱՏԱՐԿ՝ թղ. 69, 70, 71: — ԺԱՄԱՆԱԿ՝ ԺԸ—ԺԹ:

—ԳՐԻՉ՝ անծանօթ: — ԾԱՂԿՈՂ ԵՒ ԿԱԶՄՈՂ՝ անծանօթ: — ՏԵՂԻ՝ անծանօթ: — ՏԷՐ՝ Պօղոս վրդ. Ղազանճեանցի եղբայրը: — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝ 56բ, 57ա, 68բ, 69ա: — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ՝ թղթէ կողի վրայ գրուած «Պարգեւեալ յԱտրպետէ 1905: Մեծարգոյ Վ. Հ. Բառնաբաս վրդ. Պիլէզիկճեան մատենադարանապետ ի Վիեննա:

Մատեանս է՝ Ղուրան եւ Յաւելուած:

Ա. Թղ. 1ա—56բ: «Այս է գիր օրինաց Հադարացւոց կամ Իսմայէլացւոց, որ կոչի Ղուրան: Այսինքն հաւաքումն պատուիրանաց»: Գլուխներն են՝

1. Թղ. 1ա—2բ: «Այս է ցանզ Ղուրանին կարգաւ արապներէն որ է սուրայ ճիզ. ասի Աղաօրայ»:

2. ա. Թղ. 3ա—56բ: «Աղաօրա որ է գլուխ առաջին Սուրաթի Ֆաթայ, որ է նախ առաջին աֆդիդա, ունի այեաթ եօթն: Սկիզբը՝ «Յանուն Աստուծոյ ողորմածի եւ Բարերարի Աստուծոյ ընաւից ստեղծողի, որում սպասէ օրն վերջին. ուխտիւ մաղթանաց խոնարհեսցուք երկրպագանել նմայ զձեռնկալութիւն եւ զպարգեւն տուղաց եւ զաւանդն որ զմեզ մտերիմս եւ ոչ երբեք զթշնամիս, եւ ոչ մոլորեալս առ ինքն ձգեաց, միշտ անդադար ի միտ ածցուք: Այլ թարգմանութեամբ՝ Յանուն Աստուծոյ ողորմածի զթածի, գոհութիւն առ Տէրն ընաւից ողորմածի զթածի զտաւուրի յաւուրն զատաստանի: Զքեզ աղաչեմք: Ի քեզ յուսամք: Այլ թարգմանիչ՝ Յանուն Աստուծոյ ողորմածի բարերարի: Աւրհնութիւն Աստուծոյ թագաւորի ողորմածի բարերարի թագաւորի յաւուրն զատաստանի: Ով դուք ամենեքեան, ծառայեսցուք նմայ ստուգիւ օգնեալ եղիցուք: Տէր ուղղեա զմեզ ի կէտ ուղիղ՝ ի կէտ այնոցիկ ընդ որ (հ)աճեցար առանց բարկութեան ընդդէմ նոցա եւ ոչ մոլորեսցուք:

բ. Թղ. 3բ: «Աղօարա, որ է գլուխ երկրորդ ունի համար խդ»: (Լուսանցքի բաժանմունք Ա—ԽԹ:) Սկիզբը՝ «Յանուն Աստուծոյ բարերարի եւ ողորմածի զիրքս այս առանց խառնման ստութեան կամ մոլորութեան ճշմարտարան աստուածասիրացն եւ երկիւղածաց եւ աստուածապաշտից, այլ եւ աղօթից ողորմութեանց ջան եւ քեզ եւ այլոց նախնեաց...»:

գ. Թղ. 15ա: «Աղօարայ որ է գլուխ երրորդ համարս ժթ»: (Լուսանցքի բաժանմունք Ծ—ԿԸ:) Սկիզբը՝ «Զաւուրս պանդխութեան ի նմանէ կարդեալս, եթէ ոք յառաջ եւ յետոյ զերկուս աւուրս սկսանիցի ոչ եւս անտի պարտապան լինի, եթէ յԱստուծոյ երկնչիցէ իբր առ նա դառնալոց»:

դ. Թղ. 19ա: «Աղօարա, որ է գլուխ չորրորդ ունի համարս ժէ»: (Լուս. բժ. կԹ—ՁԵ:) Սկիզբը՝ «Ամենայն մարդարէից մին քան զմիւսն ինեւ բարձրացուցանելով եւ նոցա ընդ Աստուծոյ խօսելով»:

ե. Թղ. 23ա: «Սուրաթի էլմայիդէ, որ է սուիքրայ Մեդինէ, ունի այեաթ ճբ. Աղօարայ, որ է գլուխ հինգերորդ ունի համարս երեսուն եւ երկու»: (Լուս. ՁԶ—ՃԾԷ:) Սկիզբը՝ «Յանուն Աստուծոյ բարերարի եւ ողորմածի: Աստուած բարերար եւ ողորմած, այսինքն կենդանի եւ բարձրեալ, բաց յորմէ ոչ դոյ այլ: Որ յառաջ զկտակարանս, ապա զաւետարանս զմանաղարհս ուղղիչս մարդկան ետ»:

զ. Թղ. 28բ: «Սուրթի էլանամ, որ է շուքը մէդինէ ունի այեաթ ճՀե: Աղօարայ որ է գլուխ վեցերորդ ունի համարս իգ»: (Լուս. ՃԺԹ—ՃԿ:) Սկիզբը՝ «Յանուն... զառատ չնորհս Աստուծոյ եւ զսէր մեր ոչ ոք ստասցի, եթէ ոչ նախ ի փափաղելեացն իւրոց բաշխեսցէ:

է. Թղ. 34ա: «Սուրաթի էլայարաֆ, որ է քաւարան Մէքիէ ունի այեաթ ճզ: Աղօարայ, որ է գլուխ եօթներորդ ունի համարս տասն»: (Լուս. ՃԽԱ—ՃԿԱ:) Սկիզբը՝ «Սոցա որպէս եւ ամենեցունց Աստուծոյ հնազանդիցն եւ մարգարէին իւրեանց եւ բարեգործացն»: — Թղ. 36ա: «Սուրաթի էլէնֆալ, որ է աւուր առնել Մէդինէ. ունի այեաթ ՀԵ...»:

ը. Թղ. 38ա: «Սուրաթի էլ թուբայ որ է դղջալ Մէդինէ, ունի այեաթս հարիւր քսան եւ եօթն: Աղօարայ, որ է գլուխ իններորդ, ունի համարս ի»: (Լուս. բաժ. ՃԿԲ—ՃՁԱ:) Սկիզբը՝ «Գիրս այս յերկնուստ ձեզ առաքեալ, հրաման ունել եւ պահել ձեզ կացցայ»:

թ. Թղ. 42բ: «Սուրաթի հուռէս, որ է յանունս մարգարէին. Միքիէ, ունի այեաթ ճթ: Աղօարայ որ է գլուխ տասներորդ, ունի համարս ժբ»: (Լուս. ՃՁԲ—ՃԼԹ): Սկիզբը՝ «Ոչ դոյ Աստուած եթէ ոչ մի, որ ժողովելոց է զամենեսեան յաւուր յարութեան»:

ժ. Թղ. 47ա: «Սուրաթի հուդդը որ է Միքիէ ունի այեաթ ճթ: Աղօարայ որ է գլուխ ժա ունի համարս ճիգ»: (Լուս. Մ—ՄԺԲ:) Սկիզբը՝ «Աստուած ամենատես եւ ամենագէտ միայն չարագործացն զմահ անարդ եւ զչար բան լինել կամի»:

ժա. Թղ. 49ա: «Սուրաթի ուսուֆ, որ է յովսէփ զեղեցկոյն, մէքիէ ունի այեաթ ճժդ: Աղօարայ որ է գլուխ ժբ ունի համարս լէ»: (Լուս. ՄԺԳ—ՄԽԷ:) Սկիզբը՝ «Աբք բարիք ի վերայ ուխտէ որ ընդ ձեզ հաստատեցի պինդ կացէք եւ յինէն երկերուք»:

ժբ. Թղ. 56ա: «Սուրաթի ռաղդ, որ է որոտումն ամպոյ, մէքիէ, ունի այեաթ խգ: Աղօարա, որ է գլուխ ժգ ունի համարս ժե»: (Լուս. ՄԾ—ՄԾԲ:) Սկիզբը՝ «Առաւել թշնամիք եւ ընդդիմամարտք հրէայք առ մեզ միշտ»: (— Գրուած՝ «Միիիէ» եւ «Մէիիէ»:)

Բ. Յաւելուած: Թղ. 57 նախ կը գրէ՝ «Այս հետեւեալ բանքս եւս յաւելուած կցեալ էին ղուրանին, զորս զոլով ծաղրելի բանք համառօտեալ գրեցի առ ի հաճոյս բանասիրաց»:

© National Library of Armenia

ա. Թղ. 57ա: «Վարդապետութիւն Մահմէդի յոյժ պատուելի եւ ընդունելի մահմետականաց, զոր ոմն արապ գրեաց»: Սկիզբը՝ «Էր պատգամաւոր Աստուծոյ, աղօթք եւ փրկութիւն Աստուծոյ ի վերայ նորա, նստեալ ի մէջ ընկերաց ի քաղաքին իւրում, որուն անունն էր յեսրաբ»:

բ. Թղ. 59բ: «Վասն խոզի չուտելոյն ասէ ի սոյն»: «Պատասխանի ետ աբդիու ընդ որում վիճէր. Ցիսուս Քրիստոս յորժամ աղաչեցին աշակերտքն իւր զի նոցա ծանուցէ զկերպ տապանին Նոյի...»:

գ. Թղ. 60ա: «Վասն գինւոյ արդելեալ լինելոյ: Ի նոյն»: «Էին երկու հրեշտակք, միում անուամ Արովտ եւ միւսում Մարովտ, որք երբեմն յԱստուծոյ յերկնից յերկիր առաքեցան»:

դ. Թղ. 61ա: «Վասն աւուրն դատաստանին ի նոյն: «Ասէ յաւուրն յայնմիկ հրամայեսցէ Աստուած հրեշտակին մահու զի զամենայն արարած չնչաւոր սպանցէ»:

ե. Թղ. 63բ: «Վասն դրախտին: Ի նոյն»: «Քանզի դրախտ այն երկիր ոսկի չափիւղայիւ եւ կապուտակաւ շարախառնեալ եւ զանազանապէս որոշեալ ամենայն ազգի պտղաբեր ծառօք տնկեալ»:

զ. Թղ. 64բ: «Վասն դժոխոց: Ի նոյն»: «Դժոխոց երկիր է ծծմբեղէն, ծխալից եւ ձիւթախառն»:

է. Թղ. 65բ: «Վասն որդւոց անհաւատից յետ դատաստանին»: «Ցաւուրն դատաստանի եկեսցեն առաջի երեսաց Աստուծոյ եւ ասասցէ ցնոսա. ով է Տէր ձեր»:

ը. Թղ. 66ա: «Վասն երկնից»: «Առաջինն երկինն ստեղծաւ ի կանանչ ջրոյ, երկրորդն ի պայծառ ջրոյ»:

թ. Թղ. 66բ: «Կերպ բարձօղացն զաթոռն Աստուծոյ»: «Գլուխք նոցա ի ներքոյ աթոռոյն Աստուծոյ»:

ժ. Թղ. 66բ: «Թռչունքն ի միջոցի երկնից եւ մեր»: «Այն թռչունք որ ոչ երկին եւ ոչ երկիր հանին»:

ժա. Թղ. 66բ: «Տեսիլ մահմէդի»: «Ի մէջ ղուրանին ի գլուխն խէ, որ կոչի որդւոցն Իսրայէլի գրեալ է թէ գոհութիւն Աստուծոյ որ փոխեաց զծառայն իւր ի միում գիշերի...»:

ԾԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ: 1. Թղ. 56 տե՛ս վերն ի կարգին:

2. Թղ. 69ա. «Պողոս վարդապետ Ղազանճեանց (Մուրայաշեանց) նախկին առաջնորդ Քէօթահեայի եւ ապա Արդվինի մինչեւ Սիլվեանի նշանակուիլը: Մեռած է 1835 թ.: Այս Ղուրանը դուրս է եկած յիշեալ պապիս եղբօր Գրիգորանից: Նորա ձեռագրին չատ նման է: Ծնած եւ մեռած է Արդանուշ: Նուիրում եմ Վիեննայի Մխիթարեան վանքին Գրիգորանին-Մատենադարանին: 12 Յուլիսի 1905 թ. Թաւրիզ: Սարգիս Մուրայաճեան»:

Ծան. Գիրքը ծրարուած է թուղթի մը մէջ, որուն վրայ գրուած է՝ «Ղուրան, թարգմ. Ստ. Լեհացւոյ, քայքայեալ եւ պակասաւոր օրինակ (ԺԹ. դ՞ր)»:

576.

ՂՈՒՐԱՆ

Հին Թիւ՝ նոյն: — 1843:

ԹՈՒՂԹ՝ 142: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 19·5 × 14: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն 16 × 12: — ՏՈՂՔ՝ 35: — ԹԵՐԹԻՔ՝ չեն նշանակուած: — ՆԻՒԹ՝ բարակ ճերմակ ռոզորկ թուղթ: — ԿԱԶՄ՝ կիսակաշի: — ՄԱԳԱՂԱԹԵԱՑ ՊԱՀՊԱՆԱԿ՝ չունի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ մաքուր մնացած: — ԳԻՐ՝ շեղագիր: — ԶԱՐԴԱԳԻՐՔ՝ չունի: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ սեւագիր: — ԽՈՐԱՆՔ, ԿԻՍԱԽՈՐԱՆՔ, ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ, ՆԿԱՐՔ՝ չունի: — ԴԱՏԱՐԿ՝ Թղ. 134—142: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1843: — ԳՐԻՉ՝ Հ. Մարկոս Մանասեան, Անտոնեան միաբան: — ԾԱՂԿՈՂ ԵՒ ԿԱԶՄՈՂ, ՏԵՂԻ՝ Լիբանան կամ Կ. Պոլիս: — ՏԵԱՐՔ՝ Անտոնեան Հարք: — ԾԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝ Թղ. 2ա: — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ՝ Առաջին կողքին երեւի կողմը՝ «Ի Մատենադարանէ Անտոնեան Միաբանութեան, 2/15 Յունուար 1907»:

Մատեանս է՝ Գիրք օրինաց Հագարացւոց կամ Իսմայէլացւոց որ կոչի Ղուրան, այսինքն Հաւաքումն պատուիրանաց: Թարգմանեցաւ *ի Լատինացւոց բարբառոյ ի լեզու Հայոց աշխատասիրութեամբ յիմաստասէր* Ստեփանոս Վարդապետէ Լեհացւոյ: *Եւ փոխադրեցաւ ի կրկին օրինակէ բաղդատելով ընդ միմիանս աշխատասիրութեամբ Հօր* Վրդանիսի Եիւգիւֆեանց *ի Միաբանութենէ Լիբանանեան Հարց միանձանց ի յառաջելութենէն իւրում ի Պարսս ի Զուղա որ է ի Սվահան, յամի Տեառն* 1843 *Փետրուար* 12:

Ուստի ընդօրինակեցաւ եւ այս գաղափար ի ձեռն Հ. Մարկոսի Մանասեան Անտոնեան միաբանի որ է նոյն ընդ Լիբանանեան Հարս»:

1. *Թղ.* 3ա—27ա: *Նոյն նախորդին (Թ.* 575) *հետ, մինչ ան թերի կը մնայ այս կը շարունակուի՝ Թղ.* 124ա. «Աղօթարա որ է սուրա գլ. ՃՌԴ ունի բանս Ա Ցանուն Տեառն գթածի եւ ողորմածի: Զքեզ սրբելով զՏէրն ամենայն ազանց: զթաղաւորն համայնից, զԱստուած բոլորից անղադար, եւ խոնարհ սրբութիւ աղաչեա զի զքեզ ի սատանայէ որ ընդ սիրտս մարդկայինս անցանէ եւ ի սատանայական եւ ի խորամանդ մարդկանէ պահեսցէ եւ փրկեսցէ»: Վերջ:

2. *Թղ.* 124ա: Վերստին կը կրկնո ւի ճակատը:

3. *Թղ.* 125բ: Կը սկսի «Արտաքոյ Ղուրանին: Վարդապետութիւն Մահմետի յոյժ պատուելի եւ ընդունելի Մահմետականաց զոր առապ ոմն գրեաց»: Ամբողջը նոյն 575ի Ցաւելուածին հետ:

4. *Թղ.* 132ա գրուած է ցանկը:

ԾԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ: Տես վերը (խորագիրը՝ տիտղոսը: Նոյնը կրկնուած եւ Թղ. 124ա:

Հ. Հ. ՈՍԿԵԱՆ

ՎԻԵՆՆԱԿԱՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐՈՒՆ

Գրեթէ համայն մարդկութիւնը հինգ տարիէն աւելի սարսուռի եւ տառապանքի մէջ ապրեցաւ. մահ ու աւեր օդի մէջէն եւ օդի մէջ, մահ ու աւեր երկրի երկիր եւ երկիրներու մէջ, մահ ու աւեր ծովէ ծով ու ծովերու եւ կղզիներու վրայ:

Համաշխարհային պատերազմը Վիեննական Մխիթարեան Միաբանութեան գրեթէ բոլոր հիմնարկութիւններու եւ կայաններու վրայ տարածուեցաւ, անոնց նիւթական զգալի վնասներ պատճառեց եւ միաբաններու կեանքին մէջ անհաճոյ փոփոխութիւններ (արգելափակում ու բռնի աշխատանք) յառաջ բերաւ:

Մասնաւորելով մեր խօսքը Մայր վանքի վրայ՝ ան ժամանակ մը եղաւ ամէն երկրէ եկող ու խուժող (աշխատելու բերուած) Ազգայիններու ապաստանարան, ուր անոնց ամէն դիւրութիւն տրուեցաւ, նոյն իսկ զրկումովը միաբաններու, որոնք չուզեցին ջանք խնայել իրենց արիւնակիցներու ուսն ու բեռը թեթեւցնելու, գործով եւ խօսքով: Գեր. Աբբահայրը — Հ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Հապուզեան — անոնց ընդ առաջ գնաց, որքան խոհեմութիւնն ու հնարաւորութիւնները կը թելադրէին: Ամէնուն ունկնդրութիւն ու խորհուրդ չնորհեց՝ անխտիր ու սիրայօժար:

Նմանապէս հեռաւոր հաւաքավայրերու մէջ գտնուող ազգայիններու կրօնական, բարոյական եւ նիւթական օժանդակութեան մատուցանելու համար Մխիթարեան Հայերէն ոմանք ճամբորդութիւններ ըրին — դժուարութիւններու կուրծք տալով:

Շատ հաւանական նկատուեցաւ որ՝ Վիեննան եւս կրնար օդային յարձակումներու ենթարկուիլ եւ նոյն իսկ պատերազմի թատերաբեմ դառնալ: Ուստի պետութեան ցուցմունքներու վրայ եւ Գեր. Աբբահօր թելադրանքով Միաբանութեան անդամները — ամէնքը ազգային հնութիւններու եւ նախնիներէ հասած ժառանգութիւններու պահպանումին բծախնդիր եւ գնահատող — գործի լծուեցան: Անոնք՝ մեծ ծախքերով մասնաւոր պատրաստուած թաքստարաններու եւ նկուղներու մէջ՝ օրերով ու քրտինքներով բերին ու պահեցին Մատենադարանին Ձեռագիրները, թերթերը եւ դրքերը, նմանապէս արժէքաւոր հնութիւնները: Այո՛, զանոնք հարկ էր հուրէ, ապականութենէ եւ նոյն իսկ յափշտակութենէ զերծ պահել: Պետական մարմիններէ առաջարկուած տեղափոխութիւն մը հայ մշակոյթային հարստութիւն կազմող հաւաքածոներու՝ աննկատ թողուեցաւ, անոնցմէ բաժնուելու գաղափարն ինքնին ահաբեկիչ էր: Եւ այսօր գոհ ենք որ կրնանք լի ուրախութեամբ աւետել, թէ անոնցմէ ոչ մի մասնիկ կորուստի մատնուած է: Անոնք արդ նորէն իրենց դարաններու մէջ ամփոփուած են — դարձեալ միաբաններու ժիր ջանքերով եւ քանի մը անխոնջ հայ պատանիներու անձնանուիրումով:

Մխիթարեան Մատենադարանը այս շրջանին չնորհակալութեամբ նուէր ստացաւ ազգային գործիչ բազմահմուտ Դկտ. Դ. Տէր Մովսէսեանի († 1 Մարտ 1941, Վիեննա) հայերէն եւ օտար լեզուով գրքերը եւ «Համայնագիտարան»ին հում նիւթերը: Սակայն Հայաստանի եւ սփիւռքի Հայութեան հրատարակու-

© National Library of Armenia